

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

«Ես եմ դուռն, ընդ իս որ մտանիցէ՝ կեցցէ, մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ»:

«Ես եմ դուռը. ան որ այդտեղէն մտնէ պիտի փրկուի. պիտի մտնէ ու ելլէ եւ ճարակ գտնէ»:

(Յովհ. Ժ:9)

Քիչ առաջ, «Բաց մեզ Տէր» տաղի երգեցողութեամբ կատարեցինք բացումն ու օծումը այս Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, որ 1950-ական թուականներուն Իսրայէլի կառավարութեան կողմէ յատկացուած է Արեւմտեան Երուսաղէմի փոքրաթիւ հայ գաղութի գործածութեան: Մօտ երկու տարիներ առաջ ուխտաւոր հայորդի մը փափաք յայտնեց ձեռնարկել այս եկեղեցւոյ ամբողջական նորոգութեան: Սակայն պայմաններու բերումով երբ ան չկարողացաւ իրագործել իր այդ խոստումը, ամենաբարին Հայր Աստուծոյ շնորհիւ և միաբանութեանս կամքով, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի նորոգութենէն անմիջապէս ետք ի վիճակի եղանք նորոգելու այս եկեղեցին եւս, ի վայելումն մեր ժողովուրդին, որպէսզի հոս մտնողը փրկուի, մտնէ ու ելլէ և հոգեւոր ճարակ գտնէ:

Սիրոյ Վարդապետին՝ Քրիստոսի քարոզելու նախասիրած ձեւերէն մէկն էր խօսիլ առականերով ու պատկերներով - որ այդ օրերու Միջին Արեւելքի շրջանին մէջ ընդունուած և տարածուած սովորութիւնն էր - և այսօրուան մեր քարոզի բնաբանը, առնուած Յովհաննու Աւետարանէն, հարազատ կերպով կ'արտացոլացնէ այդ ընդունուած սովորութիւնը, ուր Աստուածորդին միակ պատկերի մը, դրան պատկերին ընդմէջէն կու գար հաստատելու թէ միայն ինք կարող էր մեզի տալ այն՝ ինչ որ այս հսկայ աշխարհը իր այնքան հրապուրիչ խոստումներով չէր կրցած տալ: Միւս կողմէն սակայն կարելի է նաեւ մեր Տիրոջ խօսքերը առնել իբր կոչ մը, ուղղուած այն հրեաներուն՝ որոնք հեռացած էին Աստուծոյ փարախէն:

Հաւանաբար ձեզմէ ոմանք իրենց կիրակնօրեայի կամ դպրոցական օրերէն տեսած են ու կը յիշեն նկար մը, որ կը կոչուի «Լոյս աշխարհի», գործ՝ Ամերիկացի նշանաւոր նկարիչ՝ Ուիլիլմ Հանթի, որ կը ներկայացնէ Սիրոյ Վարդապետ՝ Քրիստոս, իր լուսագեղ և յաւերժ քաղցր ու բարի ժպիտը դէմքին, ձեռքին վառ լապտեր մը, կանգնած փակ դրան մը առաջ, որ իր կարգին շրջապատուած է փուշերով ու մացառներով, կը բախէ այդ փակ դուռը:

Անշուշտ փոխաբերաբար առած, այդ դուռը մարդկային սիրտն է, որ շինուած է անծանօթ և անանուն ու չափազանց կարծր նիւթով մը, որ միշտ շրջապատուած է փուշերով: Վստահաբար արուեստագէտը ներշնչուած ըլլալու էր Յովհաննու Աւետարանի «Ես եմ դուռն, ընդ իս եթէ ոք մտանիցէ՝ կեցցէ» հատուածէն: Նաեւ, բոլոր անոնք որոնք տեսած են այդ նկարը, նկատած ըլլալու են, որ այդ դուռը բռնակ չունէր և հետեւաբար կարելի չէր զայն դուրսէն բանալ, այլ... միայն ներսէն: Իր այդ գլուխ գործոցով արուեստագէտը անկասկած ըսել կ'ուզէր թէ Աստուած ինքզինք կրնար յայտնել միայն անոնց՝ որոնք գիտեն իրենց սիրտերը ներսէն բանալ, այսինքն լսել ու գործադրել Քրիստոսի պատգամները:

Կ'ըսուի թէ երբ այդ պատկերէն հատ մը տուած են փոքրիկ աղջկայ մը, վայրկեանի մը համար նայելէ ետք պատկերին, աղջնակը կը հարցնէ ծնողներուն ըսելով. «Իսկ ինչո՞ւ համար տան բնակիչները դուռը չեն բանար»:

Երբ ծնողները անճրկած չեն կրցած պատասխանել, աղջնակը ինք կը պատասխանէ իր հարցումին, ըսելով. «Գիտեմ ինչու, որովհետեւ ներքնայարկն են ու չեն կրնար լսել»: Արդարեւ, մենք յաճախ պէտք եղածէն աւելի ժամանակ կ'անցնենք մեր կեանքի ներքնայարկերուն մէջ, ու տարուած մեր առօրեայ մտահոգութիւններէն չենք կրնար լսել և կամ ալ չենք ուզեր լսել Աստուծոյ մատներուն զարկը մեր սիրտերուն վրայ:

Սակայն երբ բանանք դռները մեր սիրտերուն և դրական տրամադրութիւն ցոյց տանք ընդունելու հոգեւոր ու կրօնական ապրումներ, այն ատեն է միայն, որ մեր կեանքերու դրան առաջ կանգնած Փրկիչը պիտի կարենայ ներս մտնել և մեր հոգիներու պարապութիւնը լեցնել իր էութեանը քաղցրութեամբ և երկնային շնորհներով, ու այս պարագային Երկնաւոր Հայրը պէտք է ըլլայ մեզմէ իւրաքանչիւրին ո՛չ միայն պատասխանը՝ այլ նաեւ հարցումը: Հայր Աստուած կը սպասէ որ մենք զինք ընդունինք ո՛չ միայն մեր անհատական, այլ նաեւ ընկերային կեանքէն ներս, այսինքն զինք դարձնենք անբաժան մասնիկը մեր առօրեայի: Ու երբ մենք լայն բանանք դռները մեր սիրտերուն, Տէր Աստուած իր Զակին՝ Քրիստոսի միջոցաւ ներս պիտի մտնէ, ու երբ մտնէ Ան տակնուվրայ պիտի ընէ մեր ներաշխարհը, ինչպէս որ Քրիստոս ըրաւ Ծաղկազարդի օրը, երբ Տաճար մտնելով տեսաւ հոն կատարուող սրբապղծութիւնը, և շրջելով վաճառականներուն և դրամափոխներուն սեղանները, ըսաւ. «Գրուած է թէ տունս աղօթքի տուն պիտի կոչուի, սակայն դուք զայն վերածեցիք աւազակներու որջի»: Նոյնն է պարագան մեր սիրտերուն, որոնք առաջին հերթին պէտք է ըլլան Աստուծոյ տաճարներ. եթէ մենք բանանք զանոնք՝ Աստուած դուրս պիտի վանէ այդտեղէն անբարոյութիւնը, նախանձը, ազահութիւնն ու չարիքը իրենց բոլոր երեսներով և գոյներով: Եթէ միայն, սիրելիներ, մենք գիտնանք բանալ մեր հոգիներն ու սիրտերը, Քրիստոս՝ իբր գերագոյն բժշկ Ներս պիտի գայ ու ամօքէ մեր վիշտերը, և բժշկէ մեր ցաւերն ու հիւանդութիւնները:

Քրիստոս ըսաւ. «Ես եմ դուռն», բայց ինչպէ՞ս մենք կրնանք ներս մտնել այդ դռնէն: Մկրտութիւնն առանձինն մեզ պիտի չփրկէր, քանի որ այդ արտաքին բան մըն է, մինչ հոգիի փրկութիւնը՝ ներքին: Սակայն, կ'ըսէ Աստուածորդին. «Ի՞նչ պիտի արժէր եթէ մարդ շահի ամբողջ աշխարհը բայց կորսնցնէ հոգին»: Մենք մկրտութեամբ քրիստոնէութիւնը ընդունած ըլլալով չենք փրկուիր, այլ պարտինք անոր միացնել աստուածահաճոյ կեանք մը: Կ'ըսուի թէ Եւրոպայի առաջին քրիստոնեայ թագաւորը՝ Մեծն Շարլըմէյն երբ կը մեռնի, իր փափաքին համաձայն զինք կը թաղեն իր գահին վրայ նստած, ձեռքին՝ բաց Աւետարան մը և ցուցամատը դրուած վերոյիշեալ նախադասութեան վրայ. «Ի՞նչ կ'արժէ եթէ ամբողջ աշխարհը շահիմ, սակայն կորսնցնեմ հոգիս»:

Մարդիկ սովորաբար այն թիւր կարծիքը ունին, որ իրենք իրենց բարեգործութիւններով պիտի կարենան գտնել Աստուծոյ ճամբան, և կամ իրենց նուիրատուութիւններով շնորհ պիտի գտնեն Աստուծոյ առաջ, սակայն այդպիսիները առաջին հերթին կը մոռնան թէ Աստուծոյ արքայութիւնը աճուրդի դրուած չէ, որովհետեւ Հայր Աստուած կ'ըսէ. «Զոգորմութիւն կամիմ եւ ոչ զգոհ»: Մեր հոգիներու փրկութեան միակ ճամբան Քրիստոսի խօսքն է. «Ես եմ դուռն»: Մենք միայն Աստուածորդւոյն հաշին նայելով ու հաշեալը մեր սիրտերէն ներս առնելով է, որ պիտի արժանանանք երկնքի արքայութեան, քանի որ Քրիստոս ինք է Դուռն ու ճանապարհը մեր հոգիներու փրկութեան:

Մէկ է արքայութեան դուռը, որ չէ եղած մարդոց կողմէ միայն նկարագրուելու և հիացումի առարկայ դառնալու, այլ մենք փորձելու ենք մեր կարելին՝ հոն հասնելու:

Իրա՛ւ հաւատացեալը կարիքը չունի բախելու այդ դուռը, որ ինքնաբերաբար պիտի բացուի բոլոր անոնց առաջ՝ որոնք գիտեն քաջաբար կոնակ դարձնել իրենց մեղքերուն և սխալներուն: Դուռը, սիրելիներ, հակապատկերն է պատին, զոր պարտինք մագլցել միւս կողմ անցնելու, մինչդեռ անկեղծօրէն Աստուծոյ հասնիլ ուզողը պէտք չունի պատեր մագլցելու, ան պարզապէս պատասխանելով Քրիստոսի իր սրտի դրան զարկին ու բանալով զայն, պիտի հասնի Աստուածային երանաւէտ կեանքին:

Հայ եկեղեցին, ուր որ ալ եղած է ան, Հայրենիքէ ներս թէ արտասահման, դարերով հայուն համար եղած է հարազատ մայր, դուռ և ճանապարհ փրկութեան: Սակայն դժբախտաբար այս օրերուս շատ մը հայորդիներ բռնած ըլլալով ուծացման ճամբան, մոռցած են իրենց հարազատ մայրը՝ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցին և տարուելով խաբուսիկ երեւոյթներէ սկսած են յաճախել նորափթիթ աղօթքի վայրեր և կամ անցած ոսկի հորթի պաշտամունքին:

Զարկը, սիրելիներ, որ կու գայ մեր սիրտերուն վրայ կը թելադրէ մեզի յանգիլ որոշումի մը, ի պատասխան այն խօսքին թէ Քրիստոս ինք է կեանքն ու ճշմարտութիւնը, դուռն ու փրկութեան միակ ճամբան: Իւրաքանչիւր նորաբաց օր՝ զարկ մըն է տրուած մեր սիրտերուն, ըստ արժանւոյն գնահատելու մեզի տրուած շնորհներն ու բարիքները: Մեզմէ իւրաքանչիւրը պարտի լսել այդ զարկը և բանալ իր սրտի դուռը, որպէսզի Սիրոյ և Խաղաղութեան Իշխանը ներս գայ իր ամբողջ փառքով, մեզ փառաւորելու իր Աստուածային լոյսով և այս նորած եկեղեցւոյ փառքով, այժմ և միշտ և յաւիտեանս, յաւիտենից. Ամէն:

